

[1] Դուրս գրման ամսաթիվ			<b>Հաշիվ վավերագիր</b> (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Մերիա	[3] Համար
10	Մայիս	2019 թ.		Բ	4326954791
[4] Մատուցման ամսաթիվը				Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
10	Մայիս	2019 թ.	Մերիա		Համար
			Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ		
Պայմանագիր			[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար	
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)					
[7.1] ՀԴՄ կտրոնի համար					

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի								
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	3	5	3	8	1	1	2
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[10] Անվանումը	«ՎԻ ԳՐՈՒՊ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)							
[11] Բանկային տվյալները	Ամերիաբանկ ՓԲԸ		N 1570015111280200					
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	Յրդ միկ. շրջ. 23 18							
[13] Լրացուցիչ տվյալներ								

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի								
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ							
[17] Բանկային տվյալները	ՀՀ Ֆին. նախ. աշխ. գործառն. վարչ.		N 900011000834					
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՍԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5							
[19] Լրացուցիչ տվյալներ								
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն							
	Լիազորագիր		Համար					
			Ամսաթիվ					

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման եթական գումարի հաշվարկը						
NN Շ/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (ըստ անվանակարգի)	Չափի միավորը	Շաբաթնույն ծավալը կամ ժամանակահատվածը	Միավորի գինը	Զեղչ (%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	Հայերեն-ուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	43.42	5000		217100
2	Հայերեն-ուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	1.33	5000		6650
3	Հայերեն-արաբերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	3.5	7450		26075
4	Հայերեն-ուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	2.5	5000		12500
5	Հայերեն-ուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	33.92	5000		169600
6	Հայերեն-ուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	5.58	5000		27900
7	Հայերեն-ուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	4	5000		20000
8	Հայերեն-ուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	3.67	5000		18350
9	Հայերեն-պարսկերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	4	6950		27800

10	Հայերեն-ռուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	6.33	5000		31650
11	Հայերեն-ռուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	8	5000		40000
12	Հայերեն-ռուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	1	5000		5000
<b>Ընդամենը</b>						<b>602625</b>

Մտադրություն  
մատուցող  
(աշխատանք  
կատարող)

STEPANYAN H MAYAK 2301850293



10/05/2019 11:21:19

Մտադրություն  
(աշխատանք)  
ստացող



22.05.2018թ.

ք. Երևան

«Քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության ՀԿԳ քննիչ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Վ.Վ.Մամիկոնյանս քննարկելով վարույթումս քննվող թիվ 58208818 քրեական գործի նյութերը.

**Պ Ա Ր Զ Ե Ց Ի**

2017 թվականի հունիսի 8-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 38-329-րդ հոդվածի 2-րդ մասի և 329-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 58208817 քրեական գործը:

Գործով կատարված նախաքննությամբ պարզվել է, որ Եղիշե Երվանդի Սուքիասյանը, հանդիսանալով ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի «Գոգավան» սահմանապահ վերահսկիչ բաժնի ավագ հսկիչը, ծանոթ լինելով ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության Տաշիրի բաժանմունքի պետ՝ Օթար Խալոյի Նաբոևի հետ, 2017 թվականի ընթացքում, ապօրինի եղանակով գումար վաստակելու շահադիտական նպատակով, ինչպես վերջինիս, այնպես էլ Վարդան Շահբազյանի հետ կազմակերպել և Վրաստանի քաղաքացի Էդգար Թանդարիանի, ՀՀ քաղաքացի Մանվել Հայրապետյանի օժանդակությամբ՝ Վրաստանի և ՀՀ քաղաքացի Լյովա Պապինյանի միջոցով, իրականացրել է տարբեր անձանց ապօրինի սահմանահատումները՝ ՀՀ տարածքից Վրաստան:

2017 թվականի սեպտեմբերի 25-ին թիվ 58208817 քրեական գործի վարույթից անջատվել է թիվ 58214117 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-329-րդ հոդվածի 1-ին մասով, 329-րդ հոդվածի 1-ին մասով, 38-329-րդ հոդվածի 2-րդ մասով, 329-րդ հոդվածի 2-րդ մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով, որը, ըստ մեղադրանքի՝ Օթար Նաբոևի, Եղիշե Սուքիասյանի, Լյովա Պապինյանի, Էդգար Թանդարիանի, Մանվել Հայրապետյանի, Սլավիկ Հովհաննիսյանի, Վարդան Ադամյանի, Քյամալ Քալաշյանի, Հրաչյա Մայիլյանի և Վարդան Շահբազյանի, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Նախաքննության ընթացքում տեղեկություններ են ստացվել, որ նույն գործով մեղադրյալ Քյամալ Քալաշյանը ՌԴ մեկնելու նպատակով դեռևս 2017 թվականին անօրինական ճանապարհով ՀՀ քաղաքացու անձնագիր ձեռք բերելու խնդրանքով դիմել է Վրաստանի քաղաքացի, ազգությամբ հայ, Երևան քաղաքի Մելքումովի փողոցի 11 շենքի 19 բնակարանի բնակիչ՝ 07.09.1977թ. ծնված Անի Պողոսի Էլիզբարյանին: Պարզվել է, որ Անի Էլիզբարյանի կողմից հետագայում Քյամալ Քալաշյանին որևէ փաստաթուղթ չի տրամադրվել:

Կատարված նախաքննությամբ պարզվել է, որ Անի Էլիզբարյանը և դեռևս ինքնությունը չպարզված ոմն Կարեն Սիմոնյանը, գործելով նախնական համաձայնությամբ և նպատակ ունենալով ապօրինի եղանակով գումար աշխատել, 2016-2017 թ.թ. ընթացքում համապատասխան վարձատրության դիմաց, ՌԴ-ից արտաքսված մի շարք անձանց

համար կեղծել և վերջիններիս են իրացրել իրավունք վերապահող պաշտոնական փաստաթղթեր հանդիսացող՝ Վրաստանի պետական սպասարկումների զարգացման գործակալություն Ախալքալակի քաղաքացիական ուժերի գործակալության ամուսնության և ամուսնալուծության կեղծ վկայականներ:

2018 թվականի մայիսի 3-ին ՀՀ ԱԱԾ քննչական վարչությունում որոշում է կայացվել թիվ 58208817 քրեական գործի նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մասով նոր՝ թիվ 58208818 քրեական գործը հարուցելու, այն առանձին վարույթում առանձնացնելու և նախաքննության ուղարկելու մասին:

2018 թվականի մայիսի 16-ին թիվ 58208818 քրեական գործն ընդունվել է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչություն, ընդունվել է վարույթ և կատարվում է նախաքննություն:

Նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել հարցաքննել Անի Պողոսի Էլիզբարյանին:

Նկատի ունենալով, որ Անի Պողոսի Էլիզբարյանը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, հետևաբար նրան հարցաքննելու համար անհրաժեշտ է հրավիրել թարգմանիչ, որը տիրապետում է ռուսերենին, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 15-րդ և 83-րդ հոդվածներով.

### Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Սույն քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել ՀՀ «Վի Գրուպ» ՍՊԸ-ի ռուսերենի թարգմանիչ Արինե Հայկի Հարությունյանին, որն քրեական գործով չչափազրգուցված անձ է:
2. Թարգմանիչ Արինե Հայկի Հարությունյանին պարզաբանել նրա իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին, որի մասին նրան հայտնել ստորագրությամբ:

ՀԿԳ քննիչ

Վ.Վ.Մամիկոնյան

Սույն որոշումն ինձ հայտարարվել է «29» մայիսի 2018թ.: Ես նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Միաժամանակ ինձ պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանիչ պարտականություններն ու իրավունքները:

Թարգմանիչ

Ա.Հարությունյան

Որոշումը հայտնեց, իրավունքներն ու պարտականությունները պարզաբանեց, քրեական պատասխանատվության մասին նախազգուշացրեց.

ՀԿԳ քննիչ

Վ.Վ.Մամիկոնյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**Թարգման ճանաչելու մասին**

«23» 02. 2017թ.

ք. Երևան

ՀՀ Քննչական Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ՝ Հ.Ա.Համբարձումյանս, վերանայելով թիվ 13832516 քրեական գործի նյութերը.

**Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝**

2016թ. նոյեմբերի 30-ին, ժամը 20:00-ին, ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնում հաղորդում է տվել Հայկանուշ Պողոջանն այն մասին, որ իր ծանոթ Գևորգ Լյովայի Սարոյանը, որդուն աշխատանքի տեղավորելու պատրվակով, խաբեությամբ և իր վստահությունը չարաշահելով, 2015թ. ամռանը Երևան քաղաքի Եր.Քոչար 15 հասցեում, մաս-մաս ստացել է 3500 ԱՄՆ դոլարին համարժեք 1.652.770 ՀՀ դրամ գումար, սակայն այդ ուղղությամբ որևէ գործողություն չկատարելով չի վերադարձրել նշված գումարը և հափշտակել է այն:

Դեպքի առթիվ 09.12.2016թ. ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում հարուցվել է թիվ 13832516 քրեական գործը, կատարվում է նախաքննություն:

Քրեական գործի քննության ընթացքում անհրաժեշտ գործողություններ կատարելու համար անհրաժեշտ է ներգրավել «Վի Գրուպ» ՍՊ ընկերության թարգման՝ Արինե Հարությունյանին:

Նկատի ունենալով վերոգրյալը և այն, որ քրեական դատավարությունը տարվում է հայերեն լեզվով, ուստի ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 15, 55 և 83 հոդվածներով.

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝**

1. Վարույթումս քննվող թիվ 13832516 քրեական գործով թարգման ճանաչել Արինե Հարությունյանին:
2. Թարգման Արինե Հարությունյանին պարզաբանել ՀՀ Քր. դատ. օր-ի 83 հոդվածով նախատեսված թարգմանի իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ՀՀ քր. օր-ի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝



Հ.Ա.Համբարձումյան

Որոշմանը ծանոթացա, պարզաբանվել է ՀՀ քր. դատ. օր-ի 83 հոդվածով նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացվել եմ ակնհայտ սուտ թարգմանություն կատարելու համար ՀՀ Քր. օր-ի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝



Ա.Հարությունյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**քրեական գործով թարգման ներգրավելու մասին**

26.03.2018թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի վարչական շրջանի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ, արդարադատության ավագ լեյտենանտ, Ա.Հ.Ալեքսանյանս քննարկելով վարույթումս քննվող թիվ 14890317 քրեական գործի նյութերը.

**Պ Ա Ր Ձ Ե Ց Ի**

2017թ. հոկտեմբերի 13-ին Գերմանիայի քաղաքացի Նավաֆ Թիֆային ՀՀ ոստիկանության ԵՔՎ Կենտրոնականի բաժնում հաղորդում է սովել այն մասին, որ 2015թ. մարտի 23-ին իր գործընկեր Մարգիս Պարսումեանը, կեղծելով բաժնեմասի առուվաճառքի պայամանագրում իր ստորագրությունը, այն ներկայացրել է ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստր, որի հիման վրա տիրացել է <<ՄԱՆՕ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ի իր 50 տոկոս բաժնեմասին ու խաբեությամբ և իր վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակել 20.000 ԱՄՆ դոլար գումար՝ իրեն պատճառելով նույնքան նյութական վնաս :

Դեպքի առթիվ 23.10.2017թ. ՀՀ ոստիկանության ԵՔՎ Արաբկիրի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի և 325-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 14890317 քրեական գործը, որը նույն օրը նախաքննության կատարման համար ուղարկվել է ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժին:

27.10.2017թ. Նավաֆ Ռաշիդի Բիֆան ճանաչվել է տուժող :

Նախաքննությամբ պարզվել է, որ տուժող Նավաֆ Ռաշիդի Բիֆան չի տիրապետում ՀՀ քրեական դատավարության բանավոր և գրավոր լեզվին, սակայն տիրապետում է արաբերեն բանավոր և գրավոր լեզվին, ուստի անհրաժեշտ է նրան հնարավորություն ընձեռել թարգմանչի օգնությամբ իրականացնելու օրենքով սահմանված իրավունքները:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-րդ մասի պահանջներով.

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

1. Թիվ 14890317 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել “ՎԻ ԳՐՈՒՊ” ՍՊԸ-ի թարգմանիչ Մարալ Մարտիրոսի Զաքարյանին, ով ունի ավարտել է ԵՊՀ արևելագիտական ֆակուլտետի արաբագիտության ամբիոնի մագիստրատուրան, ազատորեն տիրապետում է ինչպես արաբերեն, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության /հայերեն/ գրավոր և բանավոր լեզվին:
2. Մարալ Մարտիրոսի Զաքարյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու


պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Քննիչ՝



Ա. Ալեքսանյան

Ծանոթացա թարգմանչի իրավունքներին և պարտականություններին, նախազգուշացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:



« 26 » 03 2018թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Քրեական գործին թարգմանիչ մասնակից դարձնելու մասին

ք. Մասիս

«07»-ը մարտի 2018թ.

ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության քննիչ Ա. Յու Օսիայանս, քննարկելով քննարկելով թիվ 44150418 քրեական գործի նյութերը,

### Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝

2017 թվականի դեկտեմբերի 30-ին՝ ժամը 18-ից մինչև 2018 թվականի հունվարի 10-ը՝ ժամը 12-ն ընկած ժամանակահատվածում, Արարատ հարայելի Գրիգորյանը և Արթուր Նորայրի Օհանյանը գույք գաղտնի համաշտակելու նախնական դիտավորությամբ, խմբի կազմում, պատուհանի ճաղավանդակը կտրելու միջոցով ապօրինի մուտք են գործել Արարատի մարզի Նոր Կյուրին գյուղի 21-րդ փողոցի 113-րդ հասցեում գտնվող, Սերգեյ Շահենի Վիրաբյանին պատկանող բնակելի տան նկուղային հատված, որտեղից գողացել են օդու թորման սարք և պղնձյա մալուխներ՝ պատճառելով զգալի չափերի 300.000 ՀՀ դրամի նյութական վնաս, այնուհետև նկուղից վերցնելով վերնահարկի մուտքի դռան բանալին, դուռը բացելով ապօրինի մուտք են գործել ներս, սակայն այլ գույք չգողանալով հեռացել են:

Դեպքի առթիվ ոստիկանության Մասիսի բաժնում 2018 թվականի հունվարի 10-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով հարուցվել է թիվ 44150418 քրեական գործը և նույն օրը որոշում է կայացվել քրեական գործը քննիչին հանձնելու մասին և քրեական գործը ուղարկվել է Մասիսի քննչական բաժին:

2018 թվականի հունվարի 10-ին որոշում է կայացվել քրեական գործը վարույթ ընդունելու մասին:

2018 թվականի հունվարի 10-ին որոշմամբ Սերգեյ Շահենի Վիրաբյանը ճանաչվել է տուժող:

Քրեական գործով անհրաժեշտություն է առաջացել որպես տուժող հարցաքննել Սերգեյ Շահենի Վիրաբյանին, սակայն պարզվել է, որ վերջինս հայերեն գրավոր լեզվին չի տիրապետում, այլ տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին, ուստի անհրաժեշտություն է առաջացել նրա հետ քննչական գործողություններ կատարելու համար որպես թարգմանիչ մասնակից դարձնել «Վի Գրուպ» ՍՊԸ-ի աշխատակից, ռուսերեն լեզվի Թարգմանիչ Մարտինա Մարտինի Մակարյանին /անձնագիր AN 0743937, ՀՀ քաղաքացի, հաշվառված է ՀՀ, Մասիս 3-րդ թաղ., 3-րդ 2., 16-րդ բն./, ով տիրապետում է ռուսերեն ու հայերեն գրավոր լեզվին:

Ակառի ունենալով վերոգրյալը և այն, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունը տարվում է հայերեն լեզվով», ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ հոդվածի 4-րդ մասի 12-րդ կետով և 83-րդ հոդվածներով,

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի ՝**

1. Թիվ 44150418 քրեական գործով տուժող Սերգեյ Շահենի Վիրաբյանի հարցաքննությանը որպես ուսաց լեզվի թարգմանիչ մասնակից դարձնել Մարտինա Մարտինի Մակարյանին:

2. Մարտինա Մարտինի Մակարյանին պարզաբանել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանիչի իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Քննիչ՝



Ա. Յու. Օսիայան

Որոշմանը ծանոթացա, պարզաբանվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝



Մ. Մ. Մակարյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

թիվ 46100618 քրեական գործով թարգման հրավիրելու մասին

14.03.2018թ.

Եղվարդ

ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ արդարադատության մայր Ռուբիկ Մուրադի Հակոբյանս, քննարկելով թիվ 46100618 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Չ Ե Ց Ի

2018թ. մարտի 11-ին, ժամը 02:10-ին „Աստղիկ,, ԲԿ-ից ՀՀ ոստիկանության Մաշտոցի բաժին ահազանգ է ստացվել, որ „որովայնի վնասվածք,, ախտորոշմամբ բուժօգնության է դիմել Հասան Շիրինի Քալաշյանը / ծնված 1988թ., բնակվող՝ Նորագավիթ, Արտաշատի խճուղի 98 տուն/, ով հայտարարել է, որ վնասվածքը ստացել է Մարտիրոսյան 1 հասցեում:

Համաձայն Աստղիկ ԲԿ-ի կողմից տրամադրված տեղեկանքի՝ Հ.Քալաշյանի մոտ ախտորոշվել է որովայնի առաջային պատի թափանցող կտրած-ծակած վերք՝ մեծ ճարպոնի, բարակ աղու գալարի, բարակ աղու միջընդերքի վնասումով:

Հետաքննության մարմնի կողմից նախապատրաստված նյութերով փաստական տվյալներ են ձեռք բերվել առ այն, որ 10.03.2018թ. ժամը 23:00-ի սահմաններում Կոտայքի մարզի Զովունի գյուղի 1-ին փողոցի 182 հասցեում գտնվող „Արևաբաց,, հացատանը տեղի ունեցած վիճաբանության ժամանակ իր մոտ եղած դանակով հարվածել ու մարմնական վնասվածք է պատճառել Նարեկ Ժորայի Խալաթյանը:

Դեպքի առթիվ 13.03.2018թ. ՀՀ ԲԿ Կոտայքի մարզային քննչական վարչության Նաիրիի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 46100618 քրեական գործը:

13.03.2018թ. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի կարգով Ն.Խալաթյանը ձերբակալվել է, ով հայտարարել, որ չի տիրապետում դատավարության լեզվին, ազատ տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին:

13.03.2018թ. գրություն է ուղարկվել ՀՀ ԲԿ դեպարտամենտ՝ խնդրելով ապահովել ռուսաց լեզվի թարգման՝ հարցաքննության հայերենից ռուսերեն թարգմանությունը պայմանագրային հիմունքներով ապահովելու համար:

14.03.2018թ. վարույթն իրականացնող մարմին է ներկայացել „Վի Գրուպ,, ՍՊ ընկերության աշխատակից, թարգման Արինե Հայկի Հարությունյանը, ով ներկայացրել է „Վի Գրուպ,, ՍՊ ընկերության կողմից տրամադրված համապատասխան լիազորագիրը, որով լիազորվել է ՀՀ ԲԿ Կոտայքի մարզային

քննչական վարչության Նախրիի քննչական բաժնում քննվող թիվ 46100618 քրեական գործով մասնակցել քննչական գործողություններին որպես թարգման:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով, որ թիվ 46100618 քրեական գործով կասկածյալ Նարեկ Ժորայի Խալաթյանի հարցաքննության թարգմանությունը հայերենից ռուսերեն և ռուսերենից հայերեն պետք է իրականացվի պայմանագրային հիմունքներով ՀՀ-ում գործող „Վի Գրուպ“, ՍՊ ընկերության աշխատակից Արինե Հարությունյանի կողմից, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ և 83-րդ հոդվածներով.

#### ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 46100618 քրեական գործով կասկածյալ Նարեկ Խալաթյանի հարցաքննության թարգմանությունը՝ հայերենից-ռուսերեն և ռուսերենից հայերեն լեզվով պայմանագրային հիմունքներով ապահովելու համար „Վի Գրուպ“, ՍՊ ընկերության աշխատակից Արինե Հարությունյանին գործով ներգրավել որպես թարգման և հանձնարարել մասնակցել կասկածյալ Նարեկ Խալաթյանի հարցաքննությանը և կատարել հարցաքննության լիարժեք թարգմանությունը:
2. Գործով ներգրավված թարգման Արինե Հարությունյանին նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:
3. Որոշման օրինակն ուղարկել „Վի Գրուպ“, ՍՊԸ:

ՀԿԳ քննիչ

Ռուբիկ Հակոբյան

Ծանոթացա որոշմանը, ինձ բացատրվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանի իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացվել եմ նաև ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Թարգման՝

Արինե Հարությունյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Թարգմանիչ ներգրավելու մասին

<<19>> մարտի 2018թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՋՔԳՎ երկրորդ կայազորային քննչական բաժին գործուղված վեցերորդ կայազորային քննչական բաժնի ավագ քննիչ Հ.Ռ.Մելքոնյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 91265817 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2017 թվականի հոկտեմբեր ամսին, ստույգ չպարզված օրը, ժամը 12:00-ի սահմաններում, ՊԲ 59703 գորամասի 1-ին հրաձգային գումարտակի 3-րդ վաշտի պահպանության տակ գտնվող ,Գոռ-3Ե հրամանատարական դիտակետում, նույն վաշտի հրամանատար, ավագ լեյտենանտ Գարիկ Ալեքսանդրի Վարդերեսյանը, հանդիսանալով պետ, զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ՝ իր նկատմամբ ստորադաս հանդիսացող, նույն վաշտի 1-ին դասակի 3-րդ ջոկի ավագ հրաձիգ, շարքային Նարեկ Կարենի Հակոբյանի կողմից առույգ հերթափոխի ժամանակ կացարանի դաշտային հեռախոսի գանգին չպատասխանելու համար հայտնել է վերջինիս՝ անպարկեշտ ձևով ստորացնելով նրա պատիվն ու արժանապատվությունը:

Բացի այդ, ավագ լեյտենանտ Գարիկ Ալեքսանդրի Վարդերեսյանը, հանդիսանալով պետ, 2017 թվականի հոկտեմբեր ամսին, ստույգ չպարզված օրը, ժամը 11:00-ի սահմաններում, ՊԲ 59703 գորամասի 1-ին հրաձգային գումարտակի 3-րդ վաշտի պահպանության տակ գտնվող ,Գոռ 3Ե հրամանատարական դիտակետում, զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ չկապված, առանց որևէ հիմնավոր պատճառի այլ բռնի գործողություններ է կատարել իր նկատմամբ ստորադաս հանդիսացող, նույն վաշտի 1-ին դասակի 3-րդ ջոկի ավագ հրաձիգ, շարքային Նարեկ Կարենի Հակոբյանի նկատմամբ՝ ձեռքով հարվածել է մեջքի շրջանին՝ պատճառելով ֆիզիկական ցավ:

Դեպքի առթիվ 29.11.2017թ-ին ՀՀ քրեական օրենսգրքի 360հոդվածի 2-րդ մասով և 358.1 հոդվածի 1-ին մասով ՀՀ ՔԿ ՋՔԳՎ երկրորդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է թիվ 91265817 քրեական գործը:

Նույն օրը որոշում է կայացվել Նարեկ Կարենի Հակոբյանին թիվ 91265817 քրեական գործով տուժող ճանաչելու մասին:

17.03.2018թ. Նարեկ Կարենի Հակոբյանը վարույթ իրականացնող մարմնին ռուսերեն լեզվով գրված դիմում է ներկայացրել, որով վերջինս խնդրել է իրեն տրամադրել թարգմանիչ, քանի որ չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին:

Նկատի ունենալով, որ քրեական գործով անհրաժեշտ է քննչական և դատավարական գործողություններ կատարել գործով տուժող Նարեկ Կարենի Հակոբյանի հետ, ով չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, այլ տիրապետում է ռուսերեն գրավոր լեզվին, ուստի անհրաժեշտ է ներգրավել ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին տիրապետող թարգմանիչ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի  
«5-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Վարույթումս քննվող թիվ 91265817 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել <<Վի գրուպ>> ՍՊԸ-ի թարգմանիչ Հմայակ Մանվելի Ստեպանյանին (ՍՊԸ պետական ռեգիստրի վկայական 03 Ա 895651), որին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածը և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝



Հ.Ռ.Մելքոնյան

Սույն որոշումն ինձ հայտնվել է << 19 >> 5-րդ 2018 թ.-ին: Ես նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին: Միաժամանակ ինձ պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանիչի իմ պարտականություններն ու իրավունքները:

Թարգմանիչ



Հ.Մ.Ստեփանյան

Որոշումը հայտնեց, իրավունքներն ու պարտականությունները պարզաբանեց, պատասխանատվության մասին նախազգուշացրեց:

Ավագ քննիչ՝



Հ.Ռ.Մելքոնյան

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**  
**Թարգմանիչ հրավիրելու մասին**

ք. Երևան

12 մայիսի 2018թ.

«Վ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ՀԿԳ քննիչ, առաջին դասի խորհրդական Ա.Ք.Երիցյանս վերանայելով թիվ 16175218 քրեական գործի նյութերը.

**Պ Ա Ր Ձ Ե Ց Ի**

2018 թվականի մարտի 17-ին՝ ժամը 00:30-ին, «Մալայանի» անվան ակնաբուժական կենտրոնից հուղորդում է ստացվել այն մասին, որ «ձախ ակնագնդի ցնցում» ախտորոշմամբ բուժօգնության է դիմել Կարապետ Յուրիի Դավրեշյանը և հայտնել, որ Նոր Նորքի 9-րդ գանգվածում անհայտ անձը հարվածել է ուչքին:

Քննության ընթացքում ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժին բերման ենթարկված Վահագն Հովհաննեսի Քիշմիրյանն իր բացատրությամբ հայտնել է, որ մարտի 16-ին՝ ժամը 22:00-ի սահմաններում 4-րդ գյուղի սկզբնամասում տեղի ունեցած վիճաբանության ժամանակ բռունցքով մեկ անգամ հարվածել է Կ.Դավրեշյանի դեմքին պատճառելով մարմնական վնասվածք:

Կ.Դավրեշյանը մարտի 17-ին տեղափոխվել և ստացիոնար բուժում է ստացել «Արմենիա» բ/կ-ում: Բժշկական փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվել է, որ ըստ հիվանդի և նրա հարազատների խոսքերի՝ ենթարկվել է ծեծի հինգ հոգու կողմից: Քննության ընթացքում նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն, ստացվել է թիվ 0660/հ եզրակացությունը, որի համաձայն Կ.Դավրեշյանի ստացած մարմնական վնասվածքները՝ գանգուղեղային տրավմայի՝ գլխուղեղի ցնցման, ձախ ակնագնդի 1-ի աստիճանի սալջարդի, ենթակոյուկտիվալ արյունազեղման, ձախից վերին ծնոտի կոտրվածքի ձևով, պատճառված է բուֆ առարկայի ներգործությամբ, հնարավոր է գործի հանգամանքներում նշված ժամանակին, հանգամանքներում, ծանրության աստիճանը տարանջատել հնարավոր չէ և բոլորը միասին վերցված առաջացրել են առողջությանը միջին ծանրության վնաս՝ առողջության տեսական ըայքայումով:

Դեպքի առթիվ 17.04.2018թ.-ին ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով հարուցվել է թիվ 16175218 քրեական գործը:

Նախաքննության ընթացքում Կարապետ Դավրեշյանը ճանաչվել է տուժող:

Նախաքննությամբ սլարգվել է նաև, որ Կարապետ Դավրեշյանը չի տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, սակայն տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին:

Հաշիի առնելով, որ Կարապետ Դավրեշյանը չի տիրապետում ՀՀ քրեական դատավարության լեզվին՝ գրավոր հայերենին և ազատորեն տիրապետում է ռուսերեն

լեզվին, ուստի անհրաժեշտ է հնարավորություն ընձեռնել նրան թարգմանիչի օգնությամբ իրականացնել քրեադատավարական օրենքով սահմանված իր իրավունքները:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով «Քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով՝

### Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 16175218 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել Արինե Հայկի Հարությունյանին /ծնված 04.12.1954թ., բնակվող՝ ք.Երևան, Սեվաստոպոլիան 20/2 տանը հասցեում, աշխատում է «Վի Գրուպ» ՍՊԸ-ում որպես թարգմանիչ/ ազատորեն տիրապետում է հայերեն և ռուսերեն լեզուներին, վերջինս գործով չշահագրգռված անձ է:

2. Թարգմանիչ Ա.Հարությունյանին պարզաբանել նրա պարտականություններն ու իրավունքներն և նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար «Քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության վերաբերյալ:

ՀԿԳ քննիչ  Խ.Ք.Երիցյան

Թարգմանիչ  Ա.Հարությունյան

Սույն որոշումը ինձ հայտնուլել է 12 մայիսի 2018թ: Ես նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար «Քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով և 342-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Միաժամանակ ինձ պարզաբանվել են «Քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանիչի պարտականությունները և իրավունքները:

Թարգմանիչ



Ա.Հարությունյան

Որոշումը հայտնեց, իրավունքներն ու պարտականությունները պարզաբանեց պատասխանատվության մասին նախազգուշացրեց.

ՀԿԳ քննիչ  Ա.Ք.Երիցյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**Թարգմանիչ ներգրավելու մասին**

10-ը մայիսի 2018թ.

ք. Երևան

**ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի  
ավագ քննիչ՝ Ն.Ղ. Մարտիրոսյանս, քննարկելով թիվ 11100218 քրեական գործի  
նյութերը՝**

**Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝**

Անհայտ անձը, ուրիշի գույքը գաղտնի հափշտակելու դիտավորությամբ, 2017թ. դեկտեմբերի 31-ին՝ ժամը 14:00-ից մինչև 2018թ. հունվարի 6-ի ժամը 21:30-նս ընկած ժամանակահատվածում, տեխնիկական միջոցների գործադրմամբ պոկել է Երևան քաղաքի Շիրակի 72/4 հասցեում գտնվող «Ավետիսյան Քոնսթրաքշն» ՍՊ ընկերության 1-ին հարկի գրասենյակի մետաղյա ճաղավանդակը, բացել մետաղապլաստե պատուհանը, ապօրինի մուտք գործել ներս ու այնտեղից գողացել յոթ հատ համակարգչային մոնիտոր, 3 հատ համակարգչային պրոցեսոր, 2 հատ հեռուստացույց, 1 հատ «Էլփիլ» տեսակի համակարգիչ, մեկ հատ դյուրակիր համակարգիչ, «Քենոն» տեսակի պատճենահանող սարք, 1 հատ տեքիլա, 1 հատ «Նաիրի» տեսակի կոնյակ և 1 հատ «Ջեք Դանիելս» տեսակի վիսկի՝ «Ավետիսյան Քոնսթրաքշն» ՍՊ ընկերությանը պատճառելով առանձնապես խոշոր չափի 3,100,000 ՀՀ դրամի գույքային վնաս:

Դեպքի առթիվ 08.01.2018թ. ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 11100218 քրեական գործը և կատարվում է նախաքննություն:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ Նիկոլայ Այրյանը և Սամվել Ավետիսյանը չեն տիրապետում հայերեն գրավոր լեզվին, այլ տիրապետում են ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին:

Նկատի ունենալով, որ «Վի Գրուպ» ՍՊ ընկերության աշխատակից՝ ռուսերեն գրավոր և բանավոր լեզվի թարգմանիչ՝ Արինե Հայկի Հարությունյանը ունի բարձրագույն կրթություն, ազատ տիրապետում է հայերեն, ռուսերեն գրավոր և բանավոր լեզուներին և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 15-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով՝

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝**

1.Որպես թարգման հրավիրել «Վի Գրուպ» ՍՊ ընկերության աշխատակից թարգմանիչ Արինե Հայկի Հարությունյանին, ով ազատորեն տիրապետում է ռուսերեն և



հայերեն գրավոր ու բանավոր լեզվին, կարող է կատարել թարգմանություն հայերենից ռուսերեն և հակառակը, գործով չչափազրգոված անձ է:

2.Թարգման Արինե Հայկի Հարությունյանին պարզաբանել իր պարտականությունները և իրավունքները ու նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության վերաբերյալ, որի մասին նրանց հայտնել ստորագրությամբ:


Ավագ քննիչ՝



Ն.Ն.Մարտիրոսյան

Սույն որոշումը ինձ հայտնվել է, նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին: Միաժամանակ ինձ պարզաբանել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված՝ թարգմանի պարտականություններն ու իրավունքները:

Թարգման՝



**ՈՐՈՇՈՒՄ**

**Գործին թարգմանիչ մասնակից դարձնելու մասին**

16-ր հունվարի 2018թ.

ք. Մասիս

ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ս. Ա. Գաբրիելյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 44178617 քրեական գործի նյութերը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց Ի**

2017թ. հոկտեմբերի 20-ին անհայտ անձը Արարատի մարզի Հայանիստ գյուղի սկզբնամասում իջնելով Գայանե Ստեփանի Գևորգյանի վարած „ԿԻԱ,, մակնիշի 989 OR 61 հ/հ ավտոմեքենայից՝ ետևի նստատեղից գաղտնի հափշտակել է վերջինիս պատկանող պայուսակը, որի մեջ եղել է Գ.Գևորգյանի անձնագիրը, վարորդական վկայականը, 1.500 ԱՄՆ դոլար, 5.000 ՌԴ ռուբլի և 200.00 ՕՀՀ դրամ գումար՝ պատճառելով մոտ 1.300.000 ՀՀ դրամի նյութական վնաս:

Դեպքի առթիվ 30.10.2017թ. որոշմամբ ոստիկանության Մասիսի բաժնում << քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 324 –րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 44178617 քրեական գործը:

02.11.2017թ. քրեական գործի նախաքննության կատարումը Արարատի մարզային քննչական վարչության Մասիսի քննչական բաժնի պետի կողմից հանձնարարվել է ինձ:

Քրեական գործով անհրաժեշտություն է առաջացել որպես վկա հարցաքննել Իրանի Բալամախան Հանրապետության Քարաջ քաղաքի Էբնուսինա պողոտայի Ռուդաքի փողոցի Մադար շենքի 1-ին բնակարան բնակիչ Քորոշ Սամադի Սալեհ Հաջիին, սակայն պարզվել է որ վերջինս չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, այլ տիրապետում է պարսկերեն գրավոր և բանավոր լեզվին, ուստի անհրաժեշտություն է առաջացել նրա հետ քննչական գործողություններ կատարելու համար որպես թարգմանիչ մասնակից դարձնել „ՎԻ Գրուպ „ ՍՊԸ-ի աշխատակից պարսկերեն լեզվի թարգմանիչ Հրանուշ Մկրտիչի Թախմասյանին /անձնագիր AN 0780981, ՀՀ քաղաքացի, հաշվառված է Արագածոտնի մարզ ք.Աշտարակ Բաժ.Ֆու վտղոց 54-րդ տուն /, ով տիրապետում է պարսկերեն ու հայերեն գրավոր և բանավոր լեզվին:

Նկատի ունենալով վերոգրյալը և այն, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ <<Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունը տարվում է հայերեն լեզվով>>, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ հոդվածի 4-րդ մասի 12-րդ կետով և 83-րդ հոդվածներով,


**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

1. Վարույթումս քննվող թիվ 44178617 քրեական գործով Հրանուշ Մկրտիչի Թախմասյանին որպես պարսկերեն լեզվի թարգմանիչ մասնակից դարձնել վկա Քորոշ Սամադի Սալեհ Հաջիի հարցաքննությանը:

2. Հրահանգ Մկրտիչի Թախմասյանին պարզաբանել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանիչի իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝  Մ. Ա. Գաբրիելյան

Որոշմանը ծանոթացա, պարզաբանվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝  Հ. Մ. Թախմասյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Գործին թարգմանիչ մասնակից դարձնելու մասին

17-ր հունվարի 2018թ.

ք. Մասիս

ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Մ. Ա. Գաբրիելյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 44178617 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2017թ. հոկտեմբերի 20-ին անհայտ անձը Արարատի մարզի Հայանիստ գյուղի սկզբնամասում իջնելով Գայանե Ստեփանի Գևորգյանի վարած „ԿԻԱ,, մակնիշի 989 OR 61 հ/հ ավտոմեքենայից՝ ետևի նստատեղից գաղտնի հափշտակել է վերջինիս պատկանող պայուսակը, որի մեջ եղել է Գ.Գևորգյանի անձնագիրը, վարորդական վկայականը, 1.500 ԱՄՆ դոլար, 5.000 ՌԴ ռուբլի և 200.00 ՕՀՀ դրամ գումար՝ պատճառելով մոտ 1.300.000 ՀՀ դրամի նյութական վնաս:

Ղեկավարելով 30.10.2017թ. որոշմամբ ոստիկանության Մասիսի բաժնում << քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 324 -րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 44178617 քրեական գործը:

02.11.2017թ. քրեական գործի նախաքննության կատարումը Արարատի մարզային քննչական վարչության Մասիսի քննչական բաժնի պետի կողմից հանձնարարվել է ինձ:

Քրեական գործով անհրաժեշտություն է առաջացել որպես վկա հարցաքննել Իրանի Իսլամական Հանրապետության Թեհրան քաղաքի Ռահահան թաղամասի դահմեթի պողոտա 477-րդ շենքի 1-ին բնակարանի բնակիչ Սեյդհամիդ Սեյեդ Հադի Մուսավիանսադեղինը, սակայն պարզվել է որ վերջինս չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, այլ տիրապետում է պարսկերեն գրավոր և բանավոր լեզվին, ուստի անհրաժեշտություն է առաջացել նրա հետ քննչական գործողություններ կատարելու համար որպես թարգմանիչ մասնակից պարզելու „ՎԻ Գրուպ „ ՄՊԸ-ի աշխատակից պարսկերեն լեզվի թարգմանիչ Հրանուշ Մկրտչյի Թախմասյանին /անձնագիր AN 0780981, ՀՀ քաղաքացի, հաշվառված է Արագածոտնի մարզ ք:Աշտարակ Ըաֆֆու փողոց 54-րդ տուն /, ով տիրապետում է պարսկերեն ու հայերեն գրավոր և բանավոր լեզվին:

Նկատի ունենալով վերոգրյալը և նաև որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ <<Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունը տարվում է հայերեն լեզվով>>, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ հոդվածի 4-րդ մասի 12-րդ կետով և 83-րդ հոդվածներով,


Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Վարույթումս քննվող թիվ 44178617 քրեական գործով Հրանուշ Մկրտչյի Թախմասյանին որպես պարսկերեն լեզվի թարգմանիչ մասնակից դարձնել վկա Սեյդհամիդ Սեյեդ Հադի Մուսավիանսադեղինի հարցաքննությանը:

2. Հրանուշ Մկրտիչի Թախմասյանին պարգարանել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանիչի իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝  Մ. Ա. Գարրիեյան

Որոշմանը ծանոթացա, պարգարանվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝  Տ. Թախմասյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
թարգմանիչ հրավիրելու մասին

05 մարտ 2018թ.

քաղաք Երևան

«Քննչական կոմիտեի Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ, Ա.Ս. Կարապետյան, վերանայելով վարույթիս թիվ 12154418 քրեական գործի նյութերը.

**Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝**

2018 թվականի հունվարի 13-ին՝ ժամը 17:00- ի սահմաններում, անհայտ անձը թիվ 50 երթուղային ավտոբուսում Հայկուհի Սերվանտեսի Զինդարյանի պայուսակից գաղտնի հափշտակել է 150.000 ՀՀ դրամի, 3 գրամ քաշով ոսկյա ականջողերի և թվով 3 հատ բանկային քարտերի պարունակությամբ դրամապանակը, վերջինիս պատճառելով շուրջ 217.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

Դեպքի առթիվ ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժնում 23.01.2018թ. ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 12154418 քրեական գործը և նախաքննություն կատարելու համար ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժին:

2018թ. հունվարի 23-ին թիվ 12154418 քրեական գործով տուժող է ճանաչվել Հայկուհի Սերվանտեսի Զինդարյանը :

Նկատի ունենալով, որ Հայկուհի Սերվանտեսի Զինդարյանը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, բայց տիրապետում է ռուսերեն բանավոր և գրավոր լեզվին, քրեական գործի անհրաժեշտությունից ելնելով Արինե Հայկի Հարությունյան «Վի Գրուպ» ՍՊԸ-ից ներգրավել որպես թարգման, ուստի ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով.

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝**

1. Թիվ 12154418 քրեական գործով որպես թարգման ներգրավել «Վի Գրուպ» ՍՊԸ-ի թարգման՝ Արինե Հայկի Հարությունյանին, նրան պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

2. Որոշման մասին հայտնել Հայկուհի Սերվանտեսի Զինդարյանին:

**ՔՆՆԻՉ՝**

**Ա.Ս.Կարապետյան**

Ծանոթացա որոշմանը, ինձ պարզաբանվել են իմ իրավունքներն ու պարտականությունները:

Արինե Հարությունյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**Թարգմանիչ ներգրավելու մասին**

16.11.2018թ.

ք.Աշտարակ

ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության  
ավագ քննիչ՝ Դ.Ոսկանյան, ուսումնասիրելով վարույթիս թիվ 58153318 քրեական  
գործի նյութերը.

**Պ Ա Ր Զ Ե Ց Ի**

Սույն քրեական գործը հարուցվել է 2018 թվականի մայիսի 24-ին՝ ՀՀ քրեական  
օրենսգրքի 182-րդ հոդվածի 2-րդ մասի 3.1 կետի հատկանիշներով՝ Արիանա  
Արարատի Ավայանից ոմն Նարեկ Գրիգորյանի կողմից շորթամբ խոշոր չափի  
գումար հափշտակելու դեպքի առթիվ:

Քրեական գործով անհրաժեշտություն է առաջացել որպես վկա հարցաքննել  
„Արմավիր,, ՔԿՀ-ի դատապարտյալ Գարիկ Էդիկի Ոսկանյանին, ով ունի ուսական  
կրթություն և չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, որպիսի պայմաններում ՀՀ  
քննչական կոմիտեի կողմից գրություն է հասցեագրվել „Վի գրուպ,, ՍՊԸ-ին  
համապատասխան թարգմանիչ տրամադրելու համար:


„Վի գրուպ,, ՍՊԸ-ն որպես թարգմանիչ քրեական գործով լիազորել է հանդես  
գալ Անուշ Խանիկյանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության  
քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ և 83-րդ հոդվածներով.

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

Թիվ 58153318 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավվել „Վի գրուպ,,  
ՍՊԸ-ի թարգմանիչ Անուշ Խանիկյանին:

Ավագ քննիչ՝



Դ.Ոսկանյան

Ծանոթացա որոշմանը, ինձ պարզաբանվել էն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ  
հոդվածի նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ  
նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի  
338-րդ հոդվածի նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝



Ա.Խանիկյան

8-ը նոյեմբերի, 2018թ.

Բ. Երևան

« քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Աբրաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ, առաջին դասի խորհրդական Հ.Գ.Միքայելյանս, վերանայելով վարույթիս տակ գտնվող թիվ 16194118 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

« ոստիկանության 4ՀԴՊԳ վարչության թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի վարչության աշխատակիցները, « ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մալաթիայի բաժնի աշխատակիցների և « ոստիկանության Ճանապարհային ոստիկանության ծառայության 1-ին գումարտակի 2-րդ դասակի ծառայողների հետ համատեղ իրացնելով ստացված օպերատիվ տվյալները, ապօրինի թմրամիջոց ձեռք բերելու և պահելու կասկածանքով, 2018 թվականի հունիսի 13-ին՝ ժամը 21:50-ին, « ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մալաթիայի բաժին են բերման ենթարկել Արթուր Վաղիսյանի Մանվելյանին, Արտավազդ Վաղարշակի Բազմալյանին և Արմեն Ստանիսլավի Ղամբարյանին, որտեղ Ա.Մանվելյանին պատկանող ֆուցվագեն Պասատ մակնիշի 061KP178 ուսական համարանիշներով ավտոմեքենայի սրահի արտաքին զննությամբ հետևի նստատեղի դիմացի աջ հատվածում տեսանելի վայրում՝ գորգի վրա, առկա են մանրացված, չորացված թութունանման զանգված և թվով մեկ կաթուցիչ, որի մեջ առկա է դեղնականաչավուն, մանրացված թութունանման զանգված:

Նյութերի նախապատրաստման ընթացքում նշանակվել է դատաքիմիական փորձաքննություններ և համաձայն փորձագետի հմ.18-1163 և 18-1164 եզրակացությունների, Արթուր Մանվելյանի և Արմեն Ղամբարյանի մեզի փորձանմուշի մեջ հայտնաբերվել են կանաքիտիղների շարքի թմրամիջոցի թմրավկալոիդներ:

Դեպքի առթիվ 2018 թվականի հուլիսի 10-ին « ոստիկանության Մալաթիայի բաժնում « քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 16194118 քրեական գործը:


Նախաքննության ընթացքում պարզվել է, որ Արթուր Մանվելյանը ազատորեն չի տիրապետում հայերեն լեզվին, սակայն ազատորեն տիրապետում է ռուսերեն գրավար և բանավոր լեզվին:


Հաշվի առնելով, որ Ա.Մանվելյանը ազատորեն չի տիրապետում « քրեական դատավարության լեզվին՝ հայերենին, և ազատորեն տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին, ուստի անհրաժեշտ է հնարավորություն ընձեռնել նրա Թարգմանչի օգնությամբ իրականացնել քրեադատավարական օրենքով սահմանափակ իր հոսմունքները:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով « քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով՝

1.Թիվ 16194118 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել Արինե Հայկի Պոլիսյանին / անձնագիր AN 0745803, տրված 09.12.2013թ-ին 001-ի կողմից, հրավիրված ՀՀ, ք.Կապան, Լեռնագործների փողոց, 1-ին շենք 13քնակարան շրջանում, աշխատում է «Վի գրուպ» ՍՊԸ-ում, որպես թարգմանիչ/, ով ազատորեն ապաստան է հայերեն և ռուսերեն լեզուներին, վերջինս գործով չշահագրգռված անձ

2.Թարգմանիչ Ա.Հարությունյանին պարզարանել նրա պարտականություններն իրավունքներն և նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու մար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության վերաբերյալ:


Ավագ քննիչ  Հ.Գ.Միքայելյան

Թարգմանիչ  Ա.Հ.Հարությունյան

Սույն որոշումը ինձ հայտնվել է « 08 » 11 20 թ: Ես նախազգուշացվել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Թաժամանակ ինձ պարզարանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանիչի պարտականությունները և իրավունքները:

Թարգմանիչ  Ա.Հարությունյան

Որոշումը հայտնեց, իրավունքներն ու պարտականությունները պարզարանեց, պատասխանատվության մասին նախազգուշացրեց.

Ավագ քննիչ  Հ.Գ.Միքայելյան